



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ



## ՆԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ հայ-թուրքական բարեկամության ծրագրի շրջանակներում գրքույկի շնորհանդես

ԵՐԵՎԱՆ, 28 հոկտեմբերի 2009թ. – Այսօր հանրությանը ներկայացվեց Հայաստանի և Թուրքիայի երիտասարդության միջև հանդուրժողականության ու համագործակցության խթանման ծրագրի շրջանակներում՝ ՆԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ հրատարակված գրքույկ, որում ամփոփված են երկու երկրների երիտասարդների շարադրությունները, ինչպես նաև ուղերձներն իրենց երկրների առաջնորդներին:

Եռալեզու գրքույկը՝ հայերեն, թուրքերեն և անգլերեն, պատրաստվել է ՆԱՀԿ աջակցությամբ՝ Հայաստանի «Ապագան քոնն է» և Թուրքիայի «Հասարակական կամավորներ» հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրի շրջանակներում, որի նպատակն է խթանել հանդուրժողականությունը մշակութային և կրթական երկխոսության միջոցով: Ծրագրի իրականացմանը ֆինանսական աջակցություն են տրամադրել ՆԱՀԿ Երևանյան գրասենյակը, Հայաստանում ԱՄՆ դեսպանատունն ու Տարածաշրջանային համագործակցության սևծովյան հիմնադրամը:

Գրքույկում ընդգրկված են ծրագրին մասնակցող տասնութ հայ և թուրք երիտասարդների լավագույն շարադրությունները, ինչպես նաև տեղեկատվություն հանդուրժողականության, ժողովրդավարության և խաղաղության մասին: Այն նաև պարունակում է տեղեկատվություն Հայաստանի և Թուրքիայի մշակութային վայրերի վերաբերյալ:

Ռուզաննա Ջազարյանը գրում է հանդուրժողականության և երկխոսության համար նրա կարևորության մասին. «Մենք չենք կարող գնալ երկխոսության առանց հանդուրժողականության: Կարծում եմ, որ մեր դեպքում հանդուրժողականությունը ոչ միայն հարգանքի զգացումն է դիմացինիդ հետաքրքրությունների և համոզմունքների նկատմամբ, այլ նաև երկխոսության գնալու ցանկությունն ու պատրաստվածությունը»:

Էյմեն Բաքրըջըն գրում է. «Կամուրջներ. կողմերի միացման կետ, տարբերությունների միացման կետ: Ինչպես Եղեգնաձորը, որը միացնում է Հայաստանի տարբեր մասերը, ինչպես Բոսֆորը, որը միացնում է երկու տարբեր մայրցամաքներ: Կամուրջները միացնում են ոչ միայն հողեր, այլ նաև մարդկանց և մշակույթներ. կամուրջները միայն քարից և ցեմենտից չեն կառուցված: Որոշ կամուրջներ կառուցված են արվեստով, սիրով և ընկերությամբ: Կարճ ասած՝ ամեն հպում ստեղծում է նոր կամուրջ այս տողերը կամուրջ են Ձեր և իմ միջև...»:

Շնորհանդեսի ընթացքում նաև ցուցադրվեցին ծրագրին առնչվող իրեր՝ հայ-թուրքական հուշանվերներ, բարյացակամության կամուրջի նմուշներ, ծրագրի մասին պատմող ֆիլմ և երեխաները ներկայացրեցին մշակութային բազմազանության պար: Ծրագրի մասնակիցները

նաև ներկայացրեցին իրենց գաղափարները երիտասարդության մասնակցությամբ տարածաշրջանային համագործակցության հեռանկարների վերաբերյալ:

«Անվտանգությունն ու համագործակցությունը մեր կազմակերպության առանցքային բառերն են, և այս ծրագիրը նպատակ ունի խթանել անվտանգ և կայուն միջավայր և համագործակցություն ԵԱՀԿ մասնակից պետությունների միջև: Հուսով եմ, որ այս ծրագիրն ու այս գրքույկը ևս մեկ քայլ կհանդիսանան երկու հարևան երկրների միջև «բարյացակամության կամուրջ» կառուցելու ուղղությամբ», - ասաց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Սերգեյ Կապինոսը:

«Ապագան քոնն է» բարեգործական հասարակական սոցիալական կազմակերպության նախագահ Նարինե Սարգսյանը հավելեց. «Ուսումնասիրելով հանդուրժողականության, ժողովրդավարության և խաղաղության հիմունքները և այցելելով մյուս երկիրը, երիտասարդները կարողացան իրար ավելի լավ հասկանալ և վստահել միմյանց՝ ի շահ տարածաշրջանային կայունության»:

Հավելյալ տեղեկությունների համար, կարող եք դիմել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի Մամուլի և հանրային կապերով պատասխանատու Գոհար Ավագյանին, 229610/11/12, ներքինը՝ 5406, բջջ. 091 436389: